Դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր

II դասարան

ՍՈՒՍԱՆՆԱ ԿԱՏՎԱԼՅԱՆ

2022-2023 ուստարի

Կրթա-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Դասարանի բնութագիրը — II դասարանում ընդգրկված է 12 աշակերտ, որոնցից՝ 4 տղա և 8 աղջիկ: Ծանոթ եմ երեխաների անհատական հակումներին, ընտանիքներին,ծնողներին:
Ամբողջ դասարանը ապահովված է համապատասխան դասագրքերով (անվճար):
Դասարանում ստեղծվել է համերաշխ կոլեկտիվ, առողջ մթնոլորտ: Գործում է ծնող-ուսուցիչ-դպրոց կապը: Բարձր հիմքերի վրա է դրված դասարանի սանիտարահիգիենիկ վիճակը: Դասարանում բարձրացնել կարգապահությունը: Աշակերտների մոտ ձևավորել կամային հատկանիշներ, ինքնուրույնմտածելու,ստեղծագործելու կարողություններ: Կազմակերպել տարբեր միջոցառումներ, էքսկուրսիաներ: Ստեղծել ստենդ-վահանակներ, կանաչ անկյուն: Կանխել անհարգելի բացակայությունները: Հաճախակի ստուգել սանիտարական վիճակը, գրենական պիտույքները, դասագրքերի վիճակը: Աշակերտների մեջ դաստիարակել ընկերասիրություն,ազնվություն, հարգալիցվերաբերմունք մեծերի նկատմամբ,պարտաճանաչություն,աշխատասիրություն:

Հոգևոր դաստիարակություն

1. Հոգևոր դաստիարակություն — Զրույցների միջոցով աշակերտներին ծանոթացնել հայ հոգևոր արժեքներին: Տալ տեղեկություններ հայ ժողովրդի ծագման, նրա ճակատագրի, գերբի, զինանշանի, դրոշի, հիմնի, քրիստոնեությունը որպես պետական կրոն հաստատելու մասին:
2. Գեղագիտական դաստիարակություն — Զարգացնել աշակերտների գեղագիտական ճաշակը, գեղեցիկն ըմբռնելու, գնահատելու և ստեղծագործելու կարողություն: Նրանցընդգրկել արտադասարանական ձեռարվեստի, թատերական, երաժշտական խմբակներում: Կազմակերպել էքսկուրսիաներ՝ թանգարան, արվեստի օջախներ, տեսարժան վայրեր:
3. Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն — Զարգացնել հայրենասիրական վեհ զգացում, ազգային արժեքների նկատմամբ պատրաստակամություն՝ պաշտպանել մեր անկախ հանրապետությունը: Տեղեկություններ տալ հայկական գերբի, դրոշի մասին: Սովորեցնել հիմնը և ազգային հայրենասիրական երգեր: Կազմակերպել զրույցներ նվիրված Հայաստանին, հայ ազգի հերոսներին:
4. Ֆիզիկական դաստիարակություն — Անցկացնել զրույցներ «Սպորտն ու առողջությունը», «Առողջ մարմնի մեջ առողջ հոգի» թեմաներով: կազմակերպել սպորտլանդիաներ, խաղեր՝ շարժական բնույթի, միջդասարանային սպորտային մրցույթներ: Ներկայացնել առավոտյան մարնամարզությամբ զբաղվելու, առողջ սնունդով սնվելու անհրաժեշտությունն ու կարևորությունը:
5. Աշխատանքային դաստիարակություն — Աշակերտների մեջ դաստիարակել աշխատասիրություն, անցկացնել զրույցներ աշխատանքի կարևորության և անհրաժեշտության

մասին, սովորեցնել առած-ասացվածքներ: Սահմանել հերթապահություն, հետևել դասասենյակի մաքրությանը և մասնակցել դպրոցում կազմակերպվոմեզ շաբաթօրյակներին:
6. Բնապահպանական դաստիրարակություն — Տնկել ծառեր, աճեցնել ծաղիկներ, խնամել նջրել դրանք: Անցկացնել զրույցներ բնության պահպանության կարևոր դերի մասին: Կազմակերպել էքսկուրսիաներ բնության գրկում: Երեխաների ուշադրությունը կենտրոնացնել մոտ աճող բույսերի, ապրող կենդանիների վրա:
7. Դպրոց-ընտանիք կապը — Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ: Այցելել աշակերտների տները, մոտիկից ծանոթանալ յուրաքանչյուր աշակերտի ընտանիքին: Ծնողներին մասնակից դարձնել ինչպես դասարանում կատարվող աշխատանքներին, այնպես էլ դպրոցում կատարվող աշխատանքներին: Ստեղծել ծնող –ուսուցիչ-դպրոց կապ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Նպատակը	Ուսումնական շաբաթը
Բարի գալուստ 2022-2023 ուստարի	Աշակերտների ընդունում: Նստեցնել դասարանում ըստ հասակի, տեսողությոն ու լսողության: Ընտրել դասարանի ակտիվ, սահմանել հերթապահություն և պահպանել կարգապահությունը:	1-ին շաբաթ
Ազատ, անկախ Հայաստան	Գաղափար տալ Հայաստանի անկախության օրվա մասին, ինչ ձեռքբերումներ ունի Հայաստանը անկախությունից հետո:	2-րդ շաբաթ
Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում	Մշակել կանոններ դպրոցում իրենց իրավունքների և պարտականությունների մասին:	3-րդ շաբաթ
Կարող եմ օգտակար լինել	Դասասենյակում ստեղծել կանաչ անկյուն: Պահպանել դասասենյակի մաքրությունը, խնամել ծաղիկները:	4-րդ շաբաթ
Ես էլ եմ քեզ նման	Վերհանել հանդուրժող մարդուն բնորոշ առանձնահատկությունները: Զնավորել հանդուրժող վերաբերմունք դիմացինի նկատմամբ:	5-րդ շաբաթ
Եկեք բոլորս փորձենք այն, ինչը հնարավոր է	Կարևորել փոխօգնության և համագործակցության դերը մարդկանց կյանքում:	6-րդ շաբաթ
Իմ երազանքը	Կարևորել այն գաղափարը, որ երազանքներին հասնելու համար, պետք է ունենալ նպատակներ, իսկ նպատակներին հասնելու համար, պետք է հաղթահարել ցանկացած խոչնդոտներ, դժվարություններ:	7-րդ շաբաթ
Փոքրիկ պատմություններ մարդկային և հասարակական խնդիրների մասին	Բացահայտել մարդկային, բարոյական, քաղաքացիական որակներ, արժեքներ, հասարակական խնդիրներ, որոնք թաքնված են փոքրիկ պատմությունների մեջ:	8-րդ շաբաթ

Աշխարհը հրաշալի է	Քննարկել շրջակա միջավայրի վրա ազդող տարատեսակ գործոնները և քննարկել, թե ինչպես կարելի է պահպանել շրջակա միջավայրը:	9-րդ շաբաթ
Բնական աղետներ	Ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները: Գաղափար տալ, թե ինչպես պաշտպանվել բնական աղետների ժամանակ:	10-րդ շաբաթ
Հեքիաթն իմ աշխարհն է	Ընթերցել հայ մանկագիրների հեքիաթները, սերմանել ազնվություն, ընկերասիրություն, լավն ու բարին:	11-րդ շաբաթ
Այս իրական, այս հեքիաթային աշխարհը	Ամանորյա ներկայացման դիտում՝ Լ. Քալանթարյանի անվան թատրոնում: Նպաստել բարոյական, գեղագիտական և այլ արժեքների ձևավորմանը:	12-րդ շաբաթ
Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում	Մտորել 1-ին կիսամյակում բացթողումների և ձեռքբերումների շուրջ:	13-րդ շաբաթ
Գյուղ կանգնի, գերան կկոտրի	Զարգացնել արդյունավետ համագործակցելու կարողություններն ու հմտությունները, զգալ կոլեկտիվում իր դերի հանդեպ պատասխանատվություն :	14-րդ շաբաթ
Մեր բանակը 29 տարեկան է	Ներկայացնել հայոց բանակի կայացման պատմությունը, մասնակցությունն ու հաղթանակները մի շարք մարտական գործողություններին: Ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:	15-րդ շաբաթ
Շնորհակալական արտահայտություններ	Ձևավորել բարեկիրք հաղորդակցվելու կարողություններ: Կարողանալ համարժեք օգտագործել խոսքային միջոցները՝ տարբեր հաղորդակցական խնդիրների լուծման համար:	16-րդ շաբաթ
Իսկ դու աղոթու՞մ ես	Ծանոթացնել եկեղեցական տոների, ծիսակատարությունների մասին, կարևորել եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	17-րդ շաբաթ
Երգը, պարը, երաժշտությունը օգնում են լավ սովորելուն	Ընտրել ինտերակտիվ մեթոդը և երգ-երաժշտությունը զուգակցել այլ առարկաների դասավանդման ժամանակ:	18-րդ շաբաթ
Հայոց գրերը	Այցելություն թանգարան: Արթնացնել սեր ազգային լեզվի հանդեպ: Ծանոթացնել ազգային տարազին, մշակույթին, սովորույթներին:	19-րդ շաբաթ
Պետք է արդյոք խնայել	Խթանել աշակերտների ստեղծագործական մտածողությունը, ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք:	20-րդ շաբաթ
Մայրիկիս տոնին	Գնահատել և արժևորել մայրիկների նվիրվածությունն ու սերը:	21-րդ շաբաթ
Ազգային և ընտանեկան տոներ	Հստակեցնել ազգային և ընտանեկան տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	22-րդ շաբաթ
Եթե ես լինեի...	Խթանել ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու հմտությունները	23-րդ շաբաթ
Քո ընկերոջ ընկերն եմ ես	Քննարկել ինչ է ընկերությունը, ինչպես պահպանել	24-րդ շաբաթ

	ընկերությունը, ով է իսկական ընկերը, տալ գնահատականներ:	
Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք միասին	Բացահայտել , որ աղջիկների և տղաների տարբերությունները չեն հակասում միմյանց, այլ լրացնում են իրար և կատարված գործն ավելի արդյունավետ կլինի, եթե տղաներն ու աղջիկները համագործակցեն, իրար օգնեն:	25-րդ շաբաթ
Փոքրիկ պատմություններ մարդկային և հասարակական խնդիրների մասին	Բացահայտել մարդկային, բարոյական, քաղաքացիական որակներ, արժեքներ, հասարակական խնդիրներ, որոնք թաքնված են փոքրիկ պատմությունների մեջ:	26-րդ շաբաթ
Հիշատակի օր	Հարգանքի տուրք մատուցել 1915թ. ապրիլի 24-ին հայ անմեղ զոհերի հիատակին:	27-րդ շաբաթ
Սպորտն ու առողջությունը	Ծանոթացնել հայկական սպորտաձևերին: Հատուկ ուշադրություն դարձնել աշակերտների օրվա ռեժիմի և անձնական հիգիենային:	28-րդ շաբաթ
Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը	Նպաստել հայրենաճանաչության բարձրացմանը: Արժևորել անցյալի ձեռքբերումներն ու հաղթանակները:	29-րդ շաբաթ
Առողջ սնունդ	Բացահայտել, որ առողջ ապրելու համար անհրաժեշտ է առողջ սնունդ: Ներկայացնել առողջ սննդի ցանկը և կարևորությունը:	30-րդ շաբաթ
Քաղաքացիական ինքնություն	Ինչպիսի որակներ պիտի ունենա քաղաքացին, քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց:	31-րդ շաբաթ
Էքսկուրսիա	Այցելել պատմամշակութային վայրեր, արվեստի օջախներ, թանգարաններ: Նպաստել աշակերտների արժեքային համակարգի, բարոյական, գեղագիտական, ճանաչողական ոլորտների զարգացմանը:	32-րդ շաբաթ